«ՎԱՆԱՁՈՐԻ ԹԻՎ 3 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ » ՊՓԲԸ –Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՊԱՀԵՍՏԱՄԱՍԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1

ք. Վանաձոր 15.05.2020թ.

<<Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա>> ՊՓԲԸ-ն ի դեմս տնօրեն Ա. Եղոյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝Գնորդ), մի կողմից, և "ՋՕՅԼ " ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Սահրադյանի, որը գործում է "ՋՕՅԼ " ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը՝ ավտոպահեստամասեր (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դր ահամար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով և ժամկետներում տրամադրած ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով և ժամկետներում տրամադրածն Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 92900 (ինսուներկու հազար ինը հարյուր) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով ,վճարումը կատարվում է կանխավճարային կարգով:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ,նախապես պատվիրատուի հայտի միջոցով: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

6.2 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.4 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում[2]:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[3]:

---

[2] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[3] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
<<Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա>> ՊՓԲԸ,	<<ՋՕՅԼ>> ՍՊԸ
ՀՀ, ք. Վանաձոր, Պ. Սևակի 49	ՀՀ, ք. Վանաձոր, Կ. Դեմիրճյան 1/11
ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ	«Ինեկոբանկ» Վանաձորի մ/ճ
ՀՀ 220055140267000	ՀՎՀՀ 06946725
ՀՎՀՀ 06907229	ՀՀ 2050222115231001
---------- Ա. Եղոյան	---------- Ա. Սահրադյան

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
15.05.2020թ. կնքված
ՎՅ-ՄԱԱՀԲ-2020 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Միավոր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր քանակը	հասցեն	Ենթակա քանակը	Ժամկետը
1	34321121	Յուղի զտիչ		Յուղի զտիչ	հատ	1400	5600	4	Պ. Սևակի 49	4	Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից
2	42911210	Օդի զտիչ		Օդի զտիչ	հատ	2700	2700	1	Պ. Սևակի 49	1	Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից
3	42911200	Բենզինի զտիչ		Բենզինի զտիչ	հատ	3900	3900	1	Պ. Սևակի 49	1	Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից
4	34321180	Արգելակման սարքեր (թմբուկային արգելակի ճնշիչներ հետևի)		Արգելակման սարքեր (թմբուկային արգելակի ճնշիչներ հետևի)	Կոմպլեկտ(4 հատ	6900	6900	1	Պ. Սևակի 49	1	Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի

											պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու20-րդ օրից
5	34321180	Արգելակման սարքեր (թմբուկային արգելակի ճնշիչներ առջևի)		Արգելակման սարքեր (թմբուկային արգելակի ճնշիչներ առջևի)	Կոմպլ եկտ(4 հատ	3000	3000	1	Պ. Սևակի 49	1	Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից
6	34321190	Անիվների հավասարակշռման սարքեր (սկավառակային արգելակի ճնշիչներ) կոմպլեկտ		Անիվների հավասարակշռման սարքեր (սկավառակային արգելակի ճնշիչներ) կոմպլեկտ	8հատ(կոմպլե կտ)	3700	3700	1	Պ. Սևակի 49	1	Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից
7	34321250	Ղեկանիվի սյուներ և տուփեր (ռուլեվոյ տյագա) կոմպ		Ղեկանիվի սյուներ և տուփեր (ռուլեվոյ տյագա) կոմպ	Կոմպլ եկտ(N-3)	14000	14000	1	Պ. Սևակի 49	1	Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից
8	34321250	Ղեկանիվի սյուներ և տուփեր(շառավոյ)կոմպ լեկտ		Ղեկանիվի սյուներ և տուփեր(շառավոյ)կոմպլեկ տ	(4՛ հատ)կ ոմ	10500	10500	1	Պ. Սևակի 49	1	Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից
9	34311210	Ղեկանիվի սյուներ և տուփեր(շտանգի ռեզին)կոմպլեկտ		Ղեկանիվի սյուներ և տուփեր(շտանգի ռեզին)կոմպլեկտ	կոմպլե կտ	2950	2950	1	Պ. Սևակի 49	1	Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից

10	34321190	Անիվների մասեր և պարագաներ (ստուպիցի պաչենիկ) զույգ		Անիվների մասեր և պարագաներ (ստուպիցի պաչենիկ) զույգ	զույգ	4000	4000	1	Պ. Սևակի 49	1	Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից
11	34331300	Տերմոստատ		Տերմոստատ	հատ	3850	3850	1	Պ. Սևակի 49	1	Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից
12	34311180	Ջրի պոմպ		Ջրի պոմպ	հատ	5000	5000	1	Պ. Սևակի 49	1	Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից
13	34311140	շարժիչի մասեր՝ շարժիչի ռեմեն		շարժիչի մասեր՝ շարժիչի ռեմեն	հատ	1500	1500	1	Պ. Սևակի 49	1	Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից
14	34321130	Ձեռքի արգելակման ճոպան		Ձեռքի արգելակման ճոպան	հատ	1500	1500	1	Պ. Սևակի 49	1	Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից
15	34311160	Մոմիկներ(սվեչա)		Մոմիկներ(սվեչա)	հատ	1450	5800	4	Պ. Սևակի 49	4	Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր

											կնքելու 20-րդ օրից
16	34311160	Մոմիկների լարեր		Մոմիկների լարեր	կոմպլեկտ	3000	3000	1	Պ. Սևակի 49	1	Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից
17	34311140	Շարժիչի մպսեր՝Ինդուկցիոն կոճ		Շարժիչի մասեր՝Ինդուկցիոն կոճ	հատ	15000	15000	1	Պ. Սևակի 49	1	Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից

Հ/Հ	Անվանումը ապանքայինանշանը	Միավորի գինը	Մատակարարման ենթակա քանակները ըստ ամիսների																			
			ապրիլ		մայիս		հունիս		հուլիս		օգոստոս		սեպտեմբեր		հոկտեմբեր		նոյեմբեր		դեկտեմբեր		Ընդամենը	
			քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
1	Յուղի զտիչ	1400	4	5600																	4	5600
2	Օդի զտիչ	2700	1	2700																	1	2700
3	Բենզինի զտիչ	3900	1	3900																	1	3900
4	Արգելակման սարքեր (թմբուկային արգելակի ճնշիչներ հետևի)	6900	1	6900																	1	6900

5	Արգելակման սարքեր (թմբուկային արգելակի ճնշիչներ առջևի)	3000	1	3000																	1	3000
6	Անիվների հավասարակշռման սարքեր (սկավառակային արգելակի ճնշիչներ) կոմպլեկտ	3700	1	3700																	1	3700
7	Ղեկանիվի սյուներ և տուփեր (ռուլեվոյ տյագա) կոմպ	14000	1	14000																	1	14000
8	Ղեկանիվի սյուներ և տուփեր(շառավոյ)կոմպլեկտ	10500	1	10500																	1	10500
9	Ղեկանիվի սյուներ և տուփեր(շտանգի ռեզին)կոմպլեկտ	2950	1	2950																	1	2950
10	Անիվների մասեր և պարագաներ (ստուպիցի պաչննիկ) զույգ	4000	1	4000																	1	4000
11	Տերմոստատ	3850	1	3850																	1	3850
12	Ջրի պոմպ	5000	1	5000																	1	5000
13	շարժիչի մասեր՝շարժիչի ռեմեն	1500	1	1500																	1	1500
14	Ձեռքի արգելակման ճոպան	1500	1	1500																	1	1500
15	Մոմիկներ(սվեչա)	1450	4	5800																	4	5800
16	Մոմիկների լարեր	3000	1	3000																	1	3000
17	շարժիչի մասեր՝Ինդուկցիոն կոճ	15000	1	15000																	1	15000

ԳՆՈՐԴ

<<Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա>> ՊՓԲԸ,

ՀՀ, ք. Վանաձոր, Պ. Սևակի 49

ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ Վ/Մ

ՀՀ 220055140267000

ՀՎՀՀ 06907229

---------- Ա. Եդոյան

ՎԱՃԱՌՈՂ

<<ՋՕՅԼ>> ՍՊԸ

ՀՀ, ք. Վանաձոր, Կ. Դեմիրճյան

1/11

«Ինեկոբանկ» Վանաձորի մ/ճ

ՀՎՀՀ 06946725

ՀՀ 2050222115231001

---------- Ա. Սահրադյան

Հավելված N 2
15.05.2020թ. կնքված
ՎՀ-ՄԱԱՀԲ-2020 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում								
			Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Ընդամենը
1	34321121	Յուղի զտիչ	5600	5600	5600	5600	5600	5600	5600	5600	5600
2	42911210	Օդի զտիչ	2700	2700	2700	2700	2700	2700	2700	2700	2700
3	42911200	Բենզինի զտիչ	3900	3900	3900	3900	3900	3900	3900	3900	3900
4	34321180	Արգելակման սարքեր (թմբուկային արգելակի ճնշիչներ հետևի)	6900	6900	6900	6900	6900	6900	6900	6900	6900
5	34321180	Արգելակման սարքեր (թմբուկային արգելակի ճնշիչներ առջևի)	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000
6	34321190	Անիվների հավասարակշռման սարքեր (սկավառակային արգելակի ճնշիչներ) կոմպլեկտ	3700	3700	3700	3700	3700	3700	3700	3700	3700
7	34321250	Ղեկանիվի սյուներ և տուփեր (ռուլեվոյ տյագա) կոմպ	14000	14000	14000	14000	14000	14000	14000	14000	14000
8	34321250	Ղեկանիվի սյուներ և տուփեր(շառավոյ)կոմպլեկտ	10500	10500	10500	10500	10500	10500	10500	10500	10500
9	34311210	Ղեկանիվի սյուներ և տուփեր(շտանգի ռեզին)կոմպլեկտ	2950	2950	2950	2950	2950	2950	2950	2950	2950
10	34321190	Անիվների մասեր և պարագաներ (ստուպիցի պաչննիկ) զույգ	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000

11	34331300	Տերմոստատ	3850	3850	3850	3850	3850	3850	3850	3850	3850
12	34311180	Ջրի պոմպ	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000
13	34311140	Շարժիչի մասեր՝ շարժիչի ռեմեն	1500	1500	1500	1500	1500	1500	1500	1500	1500
14	34321130	Ձեռքի արգելակման ճոպան	1500	1500	1500	1500	1500	1500	1500	1500	1500
15	34311160	Մոմիկներ(սվեչա)	5800	5800	5800	5800	5800	5800	5800	5800	5800
16	34311160	Մոմիկների լարեր	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000
17	34311140	Շարժիչի մասեր՝ Ինդուկցիոն կոճ	15000	15000	15000	15000	15000	15000	15000	15000	15000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

<<Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա>> ՊՓԲԸ,

ՀՀ, ք. Վանաձոր, Պ. Սևակի 49

ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ Վ/Մ

ՀՀ 220055140267000

ՀՎՀՀ 06907229

_____ Ա. Եդոյան

ՎԱՃԱՌՈՂ

<<ՋՕՅԼ>> ՍՊԸ

ՀՀ, ք. Վանաձոր, Կ. Դեմիրճյան 1/11

«Ինեկոբանկ» Վանաձորի մ/ճ

ՀՎՀՀ 06946725

ՀՀ 2050222115231001

---------- Ա. Սահրադյան